ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1/20

Քաղ. Երևան 11.02.2020 թ.

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) ի դեմս Դավիթ Տոնոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ն ի դեմս Մարտին Կարապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թ. մայիսի 11-ի N559-Ա որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը կազմակերպությանը հատկացնում է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի 1169 «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի 11006 «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական ուղեկցում)» միջոցառման համար նախատեսված 76,000.0 հազ. դրամը, համաձայն 06.12.2019թ. ՀՀ 2020թ.-ի բյուջեի մասին օրենքի N1 հավելվածի, սահմանված եռամսյակային համամասնությամբ՝ տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով, իսկ կազմակերպությունը պարտավորվում է իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքները սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածով տրված միջոցառումներին և կատարման փուլերի ժամկետներին համապատասխան:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի.

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը, ներառյալ՝ ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի միջոցով իրականացնելով ծրագրի առանձին միջոցառումների կատարման ընթացքի մշտադիտարկում՝ առանց անհարկի միջամտելու կազմակերպության գործունեությանը,

2.1.2. սահմանված պայմաններին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.3. միակողմանի լուծելու սույն պայմանագիրը, եթե.

2.1.3.1. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.3.2. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները ,

2.1.3.3. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում սահմանված միջոցառումների պլանին,

2.2. Նախարարությունը պարտավոր է.

2.2.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը,

2.2.2. իրականացված միջոցառման կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են, որի վերաբերյալ նախարարությունը եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.3. Կազմակերպությունն իրավունք ունի.

2.3.1. Կառավարության կողմից պետական բյուջեով հաստատված ֆինանսական միջոցը չհատկացնելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է.

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված դրամաշնորհի հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան,

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծախսերի հաստատված նախահաշվին համապատասխան,

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարությանը ներկայացնել աշխատանքների կատարման մասին ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետի հետ համաձայնեցված հաշվետվություններ,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի կատարման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1. Կազամակերպությանը ֆինանսական հատկացումները կատարվում են 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի 1169 «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի 11006 «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական ուղեկցում)» միջոցառման համար, տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն 06.12.2019թ. ՀՀ 2020թ.-ի բյուջեի մասին օրենքի N1 հավելվածի, սահմանված եռամսյակային համամասնություններին համապատասխան ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը կրում է պատասխանատվություն՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը, իսկ չօգտագործված միջոցները ենթակա են վերադարձման պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Ընդ որում, եթե անհաղթահարելի ուժը ծագել է կազմակերպության մոտ և վերջինիս նախաձեռնությամբ պայմանագիրը լուծվում է, ապա կազմակերպությունը նախարարությանը վերադարձնում է անհաղթահարելի ուժի ծագման օրվա դրությամբ պայմանագրի համաձայն կազմակերպությանը փոխանցված գումարը՝ չկատարված պարտավորության մասով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան քանակի օրինակներով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7.4. Սույն պայմանագրով նախատեսված նախարարության իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՋՈՒ գլխավոր շտաբի պետը, իսկ կատարված միջոցառումները ընդունում է ՋՈՒ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության պետ – ԳՇ պետի տեղակալը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ պաշտպանության նախարար	ՊՈԱԿ-ի տնօրեն
Դ.ՏՈՆՈՅԱՆ	Մ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
«11» 02 2020թ.	«11» 02 2020թ.
Երևան, Բագրևանդ 5	Երևան, Բագրևանդ 5